Ք. ԵՐԵՎԱՆ

ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(V - VII դասարաններ)

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՓՈԽՏՆՕՐԵՆ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍ.-ՈՒՀԻ՝ Մ. ՆԱՋԱՐՅԱՆ

2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԻ

Բացատրագիր

Երգչախմբի տարեկան ծրագիր

Մանկական երգչախմբի խնդիրներն ու նշանակությունը

Երեխաներին երաժշտարվեստի հետ ծանոթացնելու, այն հասկանալի ու մատչելի դարձնելու լավագույն եղանակը խմբերգային երգեցողությունն է: Մանկական երգչախմբի ու նրա ղեկավարի հիմնական նպատակն է խմբերգային երգեցողություն սովորեցնելը և երեխաների մեջ երաժշտության նկատմամբ սեր արթնացնելն է:

Երգչախմբի աշխատանքների ընթացքում իրականացվում են մի շարք կարևոր հասարակական, քաղաքական և դաստիարակչական խնդիրներ: Երգը նպաստում է խորացնելու և իմաստավորելու երեխաների սերը հայրենիքի, իր ժողովրդի ու ազգի նկատմամբ: Երգը դրվատում է հարազատ բնաշխարհի գեղեցկությունը, հայրենասիրությունը և ընկերասիրությունը:

Ընդհանուր նպատակներն ու խնդիրները.

- ձևավորել և զարգացնել խմբովի միաձայն, երկձայն և եռաձայն երգեցողության կարողություններն ու հմտությունները
- երեխայի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը, չբացառելով նաև այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները
- պահպանել և զարգացնել մանկական երգչային ձայնը
- երեխաների համախմբում համակիրների ու բարեկամների համերաշխ կոլեկտիվում

Ակնկալվող վերջնարդյունքները

Ծրագրի ավարտին աշակերտը կկարողանա՝

- Երգել /մենակ և խմբով/ մանկական, ժողովրդական , դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- Կարժևորի հայ ազգային և դասական կոմպոզիտորների երաժշտությունը, կդառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:

Երգչախմբի թեմատիկ պլանավորում
(շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

	Թեմա- Հայ կոմպոզիտորական երգեր (40 ժամ)		ժամ
Նպատակ		• Զարգացնել երաժշտական «լեզվի» տարրերը ընկալելու կարողությունը: • Զարգացնել երկձայն երգերը արտահայտիչ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով ու առոգանությամբ կատարելու կարողությունը, որոշակի ձայնավարժությունների և երգերի կատարման միջոցով: • Կատարելագործել երկձայն և բազմաձայն ռիթմական նվագակցություններ կատարելու կարողությունը: • Զարգացնել սեքստա, սեպտիմա, օկտավա ինտերվալները ճանաչելու և մաքուր ինտոնացիայով երգելու կարողությունը:	
Վերջնարդյունքներ		• Պատկերացնել երաժշտության դերն ու նշանակությունը առօրյա կյանքում: • Կարողանա մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով ու առոգանությամբ կատարել	
1	«Օրհներգ» «Հայրապետական մաղթանք»	Երաժշտությունը՝ Բ" Կանաչյանի Կոմիտաս	4
2	«Էրեբունի Երևան» «Ջա՛ն, Հայաստան»	Է. Հովհաննիսյան Մ.Մավիսակալյան	4
3	«Նոր Հայաստան»	Ա. Լուսինյան	4
4	«Ազգ իմ փառապանծ» և այլ ստ.-ներ	Ա. Բաբաջանյան	4
5	« Առավոտ Լուսո» «Հայր մեր»	Ներսես Շնորհալի Մ.Եկմալյան	4
6	« Լեպիո, լե՛,լե՛» «Հո՛յ, Նազան»	Կ. Մուրզա	4
7	« Նուբար-Նուբար»,«Հո՛յ, իմ նազանի յարը», «Մարալ-մարալ» և այլ ստ.-ներ	Ժող. երգերի մշակումներ	4
8	Ժամանակակից ստեղծագործողների երգեր		4

9	Երգշարեր Ծիսական երգեր		4
10	Դպրոցի միջոցառումների համար նախատեսվող երգեր		4
	Թեմա-	Կոմիտասյան մշակումներ (28 ժամ)	ժամ
Նպատակ		• Ծանոթացում Կոմիտասյան երգերի դերը հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ • Դասական երաժշտության մեջ երաժշտական կերպարի ընկալման կարողությունների զարգացում, • Մարդու զգայարանների վրա երաժշտական կերպարի ազդեցության արժևորում: • Բարձրացնել գեղագիտակ ճաշակը կոմիտասյան խմբերգերի նկատմամբ • Արթնացնել սեր ազգային արժեքների նկատմամբ	
Վերջնարդյունքներ		• Պատկերացնի կերպարի դերն ու նշանակությունը երաժշտության մեջ, • Կարողանա ճիշտ կատարել հնչած ստեղծագործությունները	
11	«Կաքավիկ» «Քելե, քելե»	Կոմիտաս	6
12	«Անձրևն եկավ» «Երկինքն ամպել է»	Կոմիտաս	4
13	Երգշարեր	Կոմիտաս	4
14	«Զար, զընգը » «Էսօր ուրբաթ է»	Կոմիտաս	4
15	Ժող. երգերի ժամանակակից մշակումներ	Կոմիտաս	6
16	Տարեվերջյան համերգ	Կոմիտաս	4

Վերջնարդյունք

Վերջնարդյունքում կունենանք երգեցիկ երգչախումբ ,որը էլ ավելի կգեղեցկացնի եվ կլրացնի մեր միջոցառումների ցանկը:Աշակերտները ծանոթ կլինեն մի շարք հայ եվ եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններին:Եվ իհարկե կգնահատեն լավ եվ որակյալ երաժշտությունը,քանի որ երաժշտությունը ազգություն չի ճանաչում:

5. Գրականություն

1. Դասագիրք 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների երաժշտություն

2. Հայ կոմպոզիտորներ մանկական երգեր՝ - կազմող Ս.Բաբաթորոսյան, Հայ պատանյաց ձայնը /երգարան/

3. մուլտիմեդիաներ

4. В. Соколов. Школа хорового пения. 1987г.

5. Л.М.Жарова Начальный этап обучения хорового пению. 2011г.